



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24012
24013

24014

891.99
Z-85

~~Nov. 11.
W. H. S.~~

Հ 4925

Խ Օ Լ Ե Ր Ա

b h

ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌԱՆԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ

Թ Ի Պ Լ Ի Զ

1 8 9 0

ԲԺՇԿԱՄՊԵՏ Գ. ՏԵՐ-ԴՐԻԳՈՐԵԱՆՑ (ԹԻՒՓԼԻԶԵՑԻ)

616.9

այսուց

ԽՈԼԵՐԱ

ԵԿ

Մ. Ը.
17

ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ

100/
6482

Համերամատէնի գրոյց



ԹԻՒՓԼԻԶԵՑԻ

ՃՊԱՐԵՆ ԱՐԺՐՄԱ Տ. ՆԱԶՈՒՐԵՆԻ
Յօրովհանկի և թարեալի փողոցների տներներ:

1890

2873

Ա Գ Յ Լ Ո Ւ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Խօլերային համաձարակումները մի քանի անգամ
երևացել են Կովկասիան երկուում, և համարեա ամեն
անգամ էլ մուտք են գործել Պարսկաստանի սահման-
ներից. թէ 1823, թէ 1830 և թէ 1847 թւականների
խօլերային համաձարակումները՝ Պարսկաստանից են
անցել մեր կողմերը: 1847 թւականի խօլերան իր հետե-
ւանքներով ամենասաստվկն էր—երկու տարուայ ընթաց-
քում անբողջ Ռուսաստանը մօտ 1,292,676 մարդ կոր-
ցըց: Այնուհետեւ խօլերան մեր կողմում երկեց երկու
անգամ՝ 1865 թ., և 1870 թ., և համեմատաբար այն-
քան էլ վճառ չուուեց:

Այս տարի ևս խօլերա հիւանդութիւնը հասարակու-
թեան խօսակցութեան նիւթ է դարձել՝ Պարսկաստանում
և Թիւքիայում խօլերա լինելու պատճառով: Նատերը
մտաբերելով մեր սպասերի պատճաճները անցեալ խօլե-
րաների հետեւանքների մասին սարսափի մէջ են ընկնում,
ու կարող են կրկնվել, ինչպէս առաջ, խօ-
լերայի կոտորածները: Ճշմարիտ է թեակտե անցեալ
խօլերային համաձարակումները մեզ բաւականի մեծ
վճառներ են տուել, բայց այժմ բժշկական գիտութիւնը

Дозволено цензуром, Тифлисъ, 1890 г. 17-го марта.

Тип. „Арорд“ Т. Я. Назарянц, շոլ. Головин. пр. и Еарят. ул.

այնքան մանրամասնօրէն և լաւ է ուսումնասիրել խօ-
լերան և գտել դրա դէմ աւելի զօրեղ՝ միջոցներ, որ
այնաէս վախենալ խօլերայից, ինչպէս մեր պապերն էին
վախենում և սարսափում, էլ պատճառ չկայ: Այժմ արդէն
յայտնի է թէ խօլերան ինչ հիւանդութիւն է, որտեղից է
գալիս նա, ինչ ձանապարներով է նա տարածվում, և
ինչ պէտք է անել, որ մեր կողմերը խօլերա չլինի:
Բժշկականութիւնն այնքան հիմնօրէն է ուսումնասիրել
խօլերա հիւանդութիւնը, որ առանց չափազանցութեան
կարելի է ասել, թէ խօլերա լինելը կամ չլինելը մեզա-
նից, ամբողջ հասարակութիւնից է կախված: Հարկաւոր
է միայն որ մեզանից խօրաքանչխւրը լաւ կմանայ, թէ
ինչ է խօլերան և ինչպէս պէտք է կովել նրա դէմ:
Նւ հէնց այս մեր փոքրիկ աշխատութեան նպատակն է
բացատրել.—թէ լին է խօլերա հիւանդութիւ-
նը, ինչ ձանապարհներով է նա տարած-
վում, ինչպէս պահենք խօլերայով հիւան-
դին մինչեւ բժշկի գալը, ինչպէս օգնենք
հիւանդին, ինչ անենք, որ խօլերայից ազատ
պահենք մեր բնակած տեղերը: Այս բոլորը իմա-
նալով և գործադրելով մենք բոլոր՝ համերաշխ գործու-
նէութեամբ կարող ենք ազատել թէ մեզ և թէ մեր եր-
կերը խօլերայի սարսափելի հետևանքներից:

ԻՆՉ Է ԽՈԼԵՐԱՆ

Խոլերան՝ ինչպէս և ծաղկիլը, կարմըուկը, դիֆտե-
րիաը, քութիշը և մինչև անգամ թոքախառը, վարակիչ
հիւանդութիւն է: Մըսելուց ոչ խօլերա կարող ենք ստա-
նալ, ոչ ծաղկիլ և ոչ էլ կարմըուկ. այլ խօլերայով հիւ-
անդանալու համար մեր կազմվածքը մէջ պէտք է
մտնի խօլերայի թոյնը, կարմըուկով հիւանդանալու հա-
մար՝ կարմըուկի թոյնը, ծաղկով հիւանդանալու հա-
մար՝ ծաղկի թոյնը, դիֆտերիաով կամ թոքախառը հիւ-
անդանալու համար անշուշտ մեր կազմվածքը պէտք է
վարակիլ դիֆտերիալի կամ թոքախառի թոյնով:

Դեռ սրանից 20—30 տարի առաջ՝ գիտութիւնը
այդ հիւանդութիւնների պատճառը այլ կերպ էր բացա-
տրում. երբեմն կլիմանէն համարում խօլերայի պատճառ,
երբեմն միմնորոտի ազդեցութեան եախիցն էին բռո-
նում, ոմանք էլ գրա պատճառը համարում էին ժողովրդի
աղքատութիւնն ու տնտեսական վատ գրութիւնը, և բո-
լորովին մոռանում էին, որ թէկ այդ բոլոր պայմանները
երկար ժամանակ միւնոցն էին մնում, բայց վարակիչ
հիւանդութիւնները ծագում էին և մի քանի ժամանակից
յիսոյ առանց տեսանելի պատճառը՝ անհետանում:

Միայն վերջին ժամանակները պարզվեցաւ, որ վա-
րակիչ հիւանդութիւնների պատճառը, հասարակ աչքով
անտեսանելի, մանը արարածներն են, կամ ինչպէս
մենք բժշկներս անուանում ենք՝ մի կը օքն երն են,
որոնք մտնում են մարդու կենսական հիւանդերից, աճելով աճում են,
բազմանում են և մարդուն հիւանդացնում: Խըրաքանչխւր
վարակիչ հիւանդութիւն՝ թէ խօլերան, թէ ծաղկիլը, թէ
կարմըուկը և թէ միւս վարակիչ հիւանդութիւնները ունին

իրանց յատուկ ա խտած ին, կամ հիւանդութիւն առաջ բերող միկրօբը ։ Նատ տեսակ վարակիչ հիւանդութիւնների միկրօբը՝ գլատութիւնն արդէն գտել է. միւս մարակիչ հիւանդութիւնների միկրօբները թէպէտե գտնված չեն, բայց անկատակած շատ չի քաշիլ, դրանք էլ կըգտնվին:

Միկրօբները մարդու կազմվածքի մէջ մտնում են կամ թոքերի միջով շնչառութեան ժամանակ, կամ մարսողական գործարանների միջով ուտելու կամ խմելու ժամանակ և կամ կաշու միջով, եթէ կաշու վրա վէրքեր կամ չանգուած տեղեր են լինում: Ուրեմն օդի, ջրի, կերակրի, հագուստի, գետնի միջոցով, միկրօբները կարող են մարդու կազմվածքի մէջ մտնել: Խակ կազմվածքի մէջ միկրօբներն աճում են այնպիսի արագութեամբ, որ մի միկրօբը 24 ժամուայ ընթացքում մօտ 16 միլլիօն ու կէս միկրօբ կարող է առաջանալ, հաշվելով որ մի ժամուայ մէջ մի միկրօբը բազմանալով 2 միկրօբ կըդառնայ, երկու ժամում 4, երեք ժամում 8, և այսպէս 24 ժամում 16¹ միլլիօն: Ահա արսակս միկրօբները կազմվածքի մէջ անթիւ-անհամար դառնալով, խմբովին խանգարում են կազմվածքի առողջութիւնը, թունազորում են կազմվածքն իրանցից արտադրած թոյնով, որին բժիշկներս պտօմ այսին ենք ասում, և հիւանդութեան նշաններ առաջացնում, մէկ խօսքով—մ ա դ ս հ ե ւ ա ն դ ա ն ո ւ մ է:

Խօտերային միկրօբն էլ նմանապէս, եթէ մի որևէցէ կերպով մարդու կազմվածքի մէջ է մտնում, աճելով աճում է, իրանց արտադրած պտօմ այսին թոյնով խանգարում է առողջութիւնը, և մի քանի ժամանակից յետոյ հիւանդութեան նշանները երեւում են:

ԽՈԼԵՐԱՅԻ ՏԱՐԱԾՎԵԼՈՒ ՄԻՋՈՆՑԵՐԸ

Խօտերայի հայրենիքը Հնդկաստանն է—Գանգէս և Բրահմանակուտրա գետերի ափերը: Այդ հիւանդութիւնը Հնդկաստանում յայտնի էր Քըլստոսի ծննդից գեռ շատ առաջ: Իր հայրենիքից խօլերան շատ անգամ տարածվեց աշխարհին ամեն կողմերը և բնակիչներին մեծ վնասներ տուեց: Միւս վարակիչ հիւանդութիւնների նման խօլերան ևս կարող է առաջանալ միայն այն ժամանակի, եթի մարդու մարմնի մէջ որևէցէ կերպով մրտնում է խօլերայի միկրօբը, որ ստորակիշտի (,), նմանութիւն ունի և այդ պատճառով էլ խօլերային միկրօբին ստորակէ տանուն են տուել: Առաջի անգամ խօլերային միկրօբը գտաւ բերլինի պրօֆեսոր Կուլը:

Խօլերայի միկրօբը մարսողական գործարանների մէջ է մտնում ջրի, կերակրեպէնների և կամ մրգեղինների հետ և աղիքների մէջ բազմանալով խանգարում է մարդու առողջութիւնը: Մարդս հիւանդանալով խօլերայով, փոխողութեւն և լուծողութեւն է առաջանալ: Թէ վսխածը, թէ կրկտանքը խրանց մէջ պարունակում են անթիւ-անհամար խօլերային միկրօբներ, որոնք եթէ մի որևէցէ կերպով ընկնեն խմելու ջրի և կամ ուտելեցների մէջ, կարող են ուրեխներին վարակել: Խօլերայով հետանգ ուղակե վարակել: Կամ առաջանալ կարող են մօտենալ խօլերայով հիւանդին. միայն շատ պէտք է զգուշանալ հիւանդի դուռա- փախածից և կղկղանքից: Գրանց մէջ են գտնվում վարակիչ ախտածին միկրօբները, և այդ պատճառով ամեն անգամ թէ վսխածը և թէ կրկտանքը առանձին աման ների մէջ պէտք է հաւաքել և նրանց մէջ խառնել այն ների մէջ պէտք է հաւաքել և նրանց մէջ խառնել այն

տեսակ նկաթեր, որոնք միկրօբներին սպանում, ոչնչացնում են։ Թէ ինչ նկաթեր են դրանք, այդ մասին յետոյ կըխօսենք։

Խոլերային միկրօբները կարող են և մարմնից դուրս բազմանալ։ Խոնաւ, կեղտոտ գետինը, միկրօբի սիրած տեղն է։ Բնակարանի ավելաց կեղտոտ անկիւնները, կեղտոտ շորեղիչները, միկրօբները սպաստարանն են, մի խօսքով ամեն մի կեղտոտ տեղում միկրօբները մնընդարար նկաթ են ճանկում և սկսում են արագութեամբ բազմանալ։ Մարդիկ անգիտակցաբար կարող են տարածել խօլերային միկրօբները մի տնից միւս տուն, մի թաղեց միւս թաղ և մի քաղաքից միւս քաղաք՝ իրանց շորեղով կամ այլ առարկաներով։ Մի բժիշկ պատմում է հետեւալը.—1849 թւին Անգլիայի Լիդս քաղաքից փօստով ուղարկել էին Խօրկի մօտ գտնված Մուր-Մօրկուն գիւղաքաղաքը խօլերայից մեռած մի կնոջ ապականված և չոււացլած սպիտակիղինները։ այդ ժամանակ թէ Մուր-Մօրկունում և թէ նրա շրջակայքում, մօտ 30 մղոն տարածութեան վրա, խօլերա չկար։ Փօստից շորեր սաացող գիւղացին արկդը բանալուց վրա երկրորդ օրը խօլերայով է հիւանդանում և չորրորդ օրը մեռնում։ գիւղացու կինը և նրա երկու հիւրերը խօլերայով ծանը հիւանդանում են և այդպէս խօլերայի հիւանդութեան սկզբն են տալիս և շատերը վարակվում են խօլերայով։

Մարդիկ նմանապէս անգիտակցաբար կարող են տարածել խօլերան հեռու տեղեր ի բանց կազմվածքով և ա։ Նթէ խօլերայով վարակված մի քաղաքից մի այլ քաղաք է ուղեւորվում ըստ երկութին առողջ, բայց խկապէս խօլերայով վարակված մարդ, դա կարող է պատճառ դառնալ խօլերայի հիւանդութեան տարածմանը և վարակի քաղաքի միւս բնակչներին։ Խոլե-

րայով վարակվածը առժամանակ իրան առողջ է կարծում, քանի որ դեռ խօլերային նշանները չեն երեւացել, իսկ այդ միջոցին մի այլ քաղաք ճանապարհորդերով հիւանդանում է և միւս բնակչներին վարակում։ Մի բժիշկ պատմում է, թէ 1865 թւին խօլերայի ժամանակ Օդեսայում մի, ըստ երկութին, առողջ կին թեթև լուծողութիւն ունեցող ևս փոքրիկ երեխայի հետ ուղերային էր Օդեսայից Ալյունքուրդ քաղաքը, ուր խօլերայի նշաններ բոլորովին չկային։ Կինը երրորդը օրը հիւանդանում է խօլերայով և հինգերորդը օրը մեռնում, մի քանի որից չետոյ երեխան էլ է վախճանվում խօլերայից, և ահա այդ առաջին դէպքեց խօլերան սկսվում է տարածվել Ալյունքուրդում և անցնել նրա շրջակայքը։ Այդպիսի օրինակներ շատ կան բժշկական գրականութեան մէջ, որոնք բացատրում են խօլերայի տարածման եղանակները։

Զը ի միջոցով էլ է տարածվում խօլերան։ Եթէ խօլերայով հիւանդի արտաթորութիւնները—լիսմանն ու կիլդանքը արտաքնօցների մէջ ածվեն, այդտեղեւսից կարող են գետնի տակը ծորակով անցնել և թափվել հորեսի ջրի և խմելու ջրերի մէջ անգամ։ Եւ ահա այդ տեսակ ջրերը խօլերային միկրօբներ սկսակնակելով, կարող են խօլերայի տարածմանը պատճառ դառնալ։ Նմանապէս եթէ խօլերայով հիւանդի կեղտոտած շորերը լուացվում են կամ հիւանդի կիլդանքն ու փախածը ուղղակի թափվում են խմելու համար գործածվող առուակների մէջ, —այդ տեսակ ջրերը խօլերա հիւանդութիւնը կարող են տարածել նոյնպէս խօլերային միկրօբներ պարունակող ջրով լուացված բանջարեղիչները կամ մթեղիչները կարող են վարակման միջնորդ մնել։ Կօխ և Գօս գիտնականները ճանձերի թեերի ու փոքր վրա խօլերային

մելքորներ գտան։ Ճանձերը, լճակչս յայտնի էր ուրախութեամբ այլեալ կեխսոտութիւնների վրա են թափվում, ուրեմն և խօլերայով հիւանդի կրկանքի վրա ևս այսպիսով Ճանձերը խօլերա հիւանդութիւնը կարող են տարածել՝ իրանց թեկերի կամ փորի վրա նստած մեկրօբներով վարակելով ուտելեղիններ, կերակրեղիններ և այլ առարկաններ։

ՈՎ.ՔԵՐ ԵՆ ԱԻՆԼԻ ՏՐՍ.ՄԱՂԻՎ.Ա.Ծ ԽՈԼԵՐԱՅՅՈՎ ՀԻՒԱՆԴԱՅՆԱԼՈՒ

Թէ տղամարդեկի, թէ կանաք և թէ մանուկներ հաւասարաշափ կարող են խօլերայով հիւանդանալ։ Շատ քիչ է պատահում որ ծծկեր երեխաները խօլերայով հիւանդանան, մանաւանդ եթէ իրանց մօր կաթով են կերակրում և ոչ թէ այլ կերակրեղիններով։ Երկու տարեկանից մինչեւ չորս տարեկան երեխաների մէջ խօլերա հիւանդութիւնը շատ է պատահում, և այդ հասակում երեխաները շատ են մեռնում։ Նմանակչս շատ են մեռնում 20 տարեկանից մինչ 40 տարեկան հասակ ունեցողները։ Ծերերն ու պառաւները քիչ են հեւանդանում, բայց եթէ հիւանդանում են, այլևս դժուար են լաւանում։ Աւելի շատ են հիւանդանում մշակ դասակարգին պատիկանող մարդեկի, նեղ, կեխտու, խօնաւ բնակարանների բնակիչները—բանտարկվածները, անկերանոցների բնակիչները, չքաւոր և ազքատ դասակարգին պատիկանող մարդեկի, որոնք կարողութիւն չունեն կանոնաւոր ապրելու և հազիւհագ քաշքշում են իրանց ողոքելի գոյութիւնը։

Անկանոն կեանք ունեցողներն աւելի շուտով են հիւանդանում քան թէ կանոնաւոր կեանք ունեցողները։

Խօլերայի ժամանակ, լճակչս որ փորձն էլ ցոյց է տալիս, խօլերայով հիւանդանում են աւելի երկուշաբթի և երեքշաբթի օրերը, և ընդհանրապէս տօն օրերից յետոյ, պատճառը հանկանալի է, քանի որ տօն և կերպակի օրերը մարդեկի շատակերութեամբ ու հարբեցողութեամբ պարապելով, անկանոն են անցկացնում իրանց ժամանակը։ Լուծողական գեղերի գործածութիւնը և ընդհանրապէս այն աեսակ կերպակութիւնը գործածութիւնը, որոնք լուծողութիւն կարող են պատճառել, աւելի շուտով են հիւանդանում խօլերայի ժամանակ։ մանաւանդ վատ են ներգործում հոգեկան գրգռումը և խօլերայով հիւանդանալու երկիւը։

Առողջ մարդեկի, առողջ ստամոքս ունեցողները աւելի քիչ են հիւանդանում խօլերայով, որովհետև ստամոքսի մէջ աղաթթու ասված մի հիւթ կայ, որ սպանում է խօլերայի մելքորներին։ Եթէ առողջ ստամոքսի մէջ մի որեւեց կերպով ջրի կամ կերակրեղինների հետ խօլերայովներ են մտնում, ստամոքսակին հիւթը նրանց սպանում է։ Հիւանդ ստամոքսի աղաթթուն աւելի թույլ է լինում, և եթէ խօլերային մելքորներն այնքան շատ են լինում, որ ստամոքսային աղաթթուն չէ կարողանում բռնըրին սպանել, իհարկէ մարդայիտ ժամանակ աւելի է հիւանդանում խօլերայով։ Ուրեմն մարսողական գործարանների ամենաթեթև խանգարումն անգամ, այն ժամանակ, երբ քաղաքում կամ գելում խօլերա է տարածուած, խօլերայով հիւանդանալու տրամադրութիւնը սաստիացնում է, ուրեմն պարզ է, որ անքուն գեղերները, մասողութիւնը, հոգեկան գրգռումը, որոնք մարսողական գործարանների ոյժը թուլացնում են, խօլերայով հիւանդանալու արամագրութիւնը, պէտք է աւելացնեն, շատ խմէքեղին գործածողները,

ստամոքսի հիւանդութիւն ունեցողները, հասակաւոր-մարդիկ, երկարատև հիւանդութիւն ունեցողները, չքաւորները, աղքատները և ընդհանրապէս ամենքը, որոնք թէ այս պատճառով լաւ չեն կերակրվում, աւելի շուտ են զոհ գնում խօլերային:

Խօլերան աւելի ամառն է պատահում, յունիս յուլիս և օգոստոս ամիսներին, իսկ ձմեռը՝ յունվար, փետրվար, մարտ ամիսներին խօլերային հիւանդութիւնները քիչ են վնասում:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նըրեմն մարդիկ յանկաբժակին են հիւանդանում, գոնէ իրանց ասելով մինչև հիւանդանալն իրանց շատ առողջ են զգացել, Բայց աւելի շատ անգամ է պատահում, որ խօլերային նշանները երեալուց առաջ, մարդս հիւանդանում է հասարակ լուծողութեամբ, թողլ է զգում երան, և գլուխը ցաւում է: Սակայն պէտք է ասել որ խօլերայի ժամանակ հիւանդութեան այդպիսի դէպքեր շատ են պատահում և շուտով էլ անցնում են, և հիւանդները առողջանում են:

Խօլերան խօլերան հետեւեալ նշաններով է ձանաչվում, հիւանդները իրանց ստամոքսի մէջ զգում են մի տեսակ կրկուց, կարծես թէ աղիքներում ջուր է թափվում. այնուհետև հիւանդը լուծում է, —առաջ մութ մոլարագոյն կամ ջրալի գեղագոյն կրկանք է արսաթուրում, իսկ յետոյ կրկանքի գոյնը փոխվում և դառնում է անգոյն բրնձի ջրե նման: Կրկանքի այդպիսի յատկութիւնը հաստատ ապացոյց կարող է լինել, որ հիւանդը խօլերայով է վարակված՝ միայն այն ժամանակ, երբ քաղաքում կամ գիւղում խօլերա կայ, որովհետեւ

վորլուծութեան բրնձի-ջրի գոյնով կրկանքը կարող է այլ ժամանակ պատահում և միշտ էլ պատահում է: Վերջին դէպքում շուտով ամենահասարակ միջոցներով և դեղերով մի քանի օրուայ մէջ անցնում է և հիւանդը առողջանում է: Իսկ երբ հաստատապէս յայտնի է որ մի որոշեալ տեղում, քաղաքում կամ գիւղում խօլերա հիւանդութիւն կայ, ամեն մի հիւանդի բրնձի-ջրը գոյն ունեցող կրկանքը ուղղակի նշան է թէ հիւանդը խօլերայով է վարակված, ապա ուրեմն այդպիսի հիւանդները աւելի ուշադրութեան են արժանի:

Շարունակենք մեր խօսքը: Հիւանդը մի ժամուաց ընթացքում 10—11 անգամ լուծում է, իւրաքանչիւր անգամ հիւանդը մի քանի բաժակ ջրալի կրկանք է արսաթորում, փորի կրկուցը և աղիքների մէջ երը ջուր թափվելու զգացողութիւնը շարունակվում է, բայց միրացաւ սովորաբար չէ լինում, մէզի քանակութիւնը քչանում է: Մի քանի ժամից, այն է երկրորդ կամ երրորդ լուծողութիւնից յետոյ, փսխողութիւն է առաջանում: Փախած հիւթը սովորաբար բարկացած է լինում կերակրային մնացողներից և յետոյ փոխվում է անգոյն, փոքր ինչ արիւնախան շնչուկանման հեղուկի: Փախողութիւնը շուտ-շուտ է կրկնվում, 10—15 ըսպէն մի անգամ: Փախողութիւնը սովորաբար դիւրին է կատարվում, առանց ոյժ բանեցնելով, սրտի խառնվելը շատ կարճ է տևում, այնպէս որ հիւանդները փսխում են կարծես թէ զկրուտարով, իսկ վերջը փսխողութիւնը շատ գժուար է լինում, ցաւ է պատճառում և հիւանդը կրծքի գդալի տակ ծանրութիւն և ցաւ է զգում: Լուծողութիւնից և փսխողութիւնից յետոյ մկանուն քներե կծկում է, որ խօլերայի ամենածանը և գժուարատար նշաններից մէկն է: Կծկվում են սովորաբար ձկն ամեսը և գար-

շապարի մկանունքները . աւելի քիչ է պատճենում որ
մարմնի միւս մկանունքները կծկվեն: Կծկվելու ժամանակ
ձկնամթերը պնդանում են, նրանց մէջ սաստիկ ցաւ է
զգացվում, ոտքերը կորանում են և այսպէս շարունակվում
է մի քանի ըուպէ: Ապա ընդհատվում է ու կլինվում միւ
քանի ժամ շարունակ:

Բացի լուծողութիւնից, վսխումէից և կծկվելուց,
խօլերային նշաններից մէկն էլ ժամբնի սառելն ու
կապտելն է։ Խօլերան այն տեսակը արագքնթաց և
երկիւղավի հիւանդութիւններիցն է, որ նոյն խակ հիւան-
դութեան սկզբից հիւանդի տաքութիւնը ոչ թէ աւելա-
նում, այլ ընդհակառակին պակասում է։ ամենից առաջ
սառչում են ձեռքքերն ու գարշապարը, յետոյ երեսը, քի-
թը, լեզուն, վոփը ինչ յետոյ ամբողջ մարմնը փէտա-
նում է։ Երեսը, ձեռքքերը, գարշապարը կապտում են,
երեսի գծագրութիւնը սրվում է, աչքերը փոս են ընկ-
նում և պղտորվում, սառած ու լցարացած հիւանդի ընդ-
հանուր տեսքը դիսկի է նմանում, ձայնը խանձլում,
թուլանում է և բոլորովին կորչում, զարկը թուլանում է։
Հիւանդը պառկած է լինում անձայն և անշարժ։ մկա-
նունքները կծկվելուց և կրծքի գգավի տակի ծանրութիւ-
նից, երբեմն հիւանդի գունաթափ յուսահատ երեսը,
ցաւ է արտայալում, ծարաւութիւնը սաստիկ նեղա-
ցնում է նըան, բայց բոլոր խմածը վախելով դուրս է
թափում։

ԶՆԱՅԵԼՈՂ այս բոլողին, հիւանդել գլուխալցութիւնը
միշչեւ մահը պահպանվում է, հիւանդը ամեն բան
հասկանում է, հարցերին պատասխանում է, թէպէտ շատ
դանդաղ, ակամայ և անտարբեր կերպով: Վերջին բովի-
ներին պղտողված աչքերի մէջ լոյսը թուլանում, լսողու-
թիւնը բթանում է և լնդնաձանազութիւնը կորչում:

Ծանը խօլերայի նշանները շարունակվում են 8-ից
մինչև 24 ժամ և եթէ հիւանդը չէ մեռնում, փախողու-
թիւնը և լուծողութիւնը քշանում է և բոլորովին անհե-
տանում. 24 ժամից յետոյ կրկրանքի գոյնը փոխվում է,
մաղձը խառնվելուց կանանց զեղնաւոն գոյն է ստանում,
թուլացած զարդին ամրանում է, միկանունքները կծկվելն
ու մարմնի փէտանալն անհետանում են, ոտներն ու-
ձեռքերը տաքանում են, երբեմն քրտինք է երեւում,—
և այս բոլոր նշանները ցոյց են տալիս թէ հիւանդութիւնը
դէպի լաւն է գնում:

Գժուաբառար խօնքը լոյթ վարակված կմասքեմը
հէնց հիւանդութեան տիգրեց 12—24 ժամի մէջ մեռնում
են։ Ամենասաստիկ խօնքը գէսքերը 3 կամ 4 ժամեց
յիւսոյ մահով են վերջանում։ Նթէ հիւանդներն առաջին
օրը չեն մեռնում, խօնքայի նշանների թուլանալուց յե-
տոյ՝ կարող է պատահել, որ զոհ գնան խօնքայի հետե-
ւանքներեց առաջացած ուրիշ հիւանդութիւնների։

Հետանդութեան լաւ ընթացք ստամալու շնորհած
մկանում են երկրորդ կամ երրորդ օրը. զարկը անդանում
արագանում է, երեսը կալմբում, աչքերն արևելով լու-
պում, արտասուքը շատանում է, հետանդները գանգատվում
են գլխացաւից, գլուխը ծանրանում է, ականջներում
խշչոց է առաջանում: Դրանք առողջանալուն շանճեր են
և շարունակվում են 4-Եց մենցև 10 օր: Հետանդութեան
երկրորդ կամ երրորդ օրից մէջն ալելանում է, ախոր-
ժաւութանում, քունը հանգստանում է, մաքսողու-
թիւնը կանոնաւորվում, ոյժերը վերականգնում են:
Թիւնը առաջանալու շնորհած առաջինը ըստե-
նքը առողջանալու շնորհած հետանդի ամրմինը ըստե-
նքը է ծածկվում, որ աներկեւղ է. առաջ բժեքը երեսում
են ձեռքելի և ոտքերի վրա, ինտոյ իրանի վրա, և այս
բոլորը երկու կամ չորս օրից յետոյ անցնում է:

Առողջանալու շրջանի մէջ կիւանդների մի քառորդ մասը ստանում են խօլեք այլ ի տիֆ տաված հիւանդութիւնը, —մարմնի տաքութիւնը բարձրանում է, զարկը արագանում, լեզուն չորանում է և ծածկվում պիտակի լորձախառն նիւթով, հիւանդը գառանցում է: Սրբ դրութիւնը շարունակվում է երեք կամ 7 օր, և եթէ հիւանդը չէ մեռնում, առողջանալու շրջանը շատ է երկարում:

Ընդհանրապէս նայելով հիւանդութեան նշանների ծանրութեանը կամ թուլութեանը, խօլերան կարելի է երեք տեսակի բաժանել. 1) խօլեք այլ լուծողութիւն, 2) խօլեքին ա, և 3) հեղձուցիչ խօլեք ա:

Առաջի տեսակ խօլերան աւելի թեթև հիւանդութիւն է, երկրորդը գժուար, խիլ երրորդը սաստիկ գժուար և մեծ մասամբ մահաբեր:

Այս երեք տեսակները միմեանցից զանազանվում են հիւանդութեան նշանների սաստիութեամբ կամ թուլութեամբ: Խօլերնա և հեղձուցիչ խօլերայի տեսակները հանացվում են վերը նկարագրված նշաններով, միայն խօլեքին այլ նշաններն աւելի թեթև են, խիլ հեղձուցիչ խօլեք այլ նշանները կատաղի:

Խօլերայի համաձարակումի ժամանակ ամեն մի փորլուծողութեան վրա մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել, որովհետեւ հաւանական է որ հասարակ փորլուծութիւնը կարող է սաստիանալ և խօլերայի սկիզբը դառնալով, վերջ խվերջոյ դժուարատար խօլերայի փոխել ծշմարիտ է ամեն փորլուծողութիւն դեռ ևս խօլերայի նշան չէ, բայց և այնպէս լաւ է զգուշանալ և խիոն բժշկի դիմել, քան թէ այսօր-վաղը գցելով վերջը դժուարատար խօլերա ունենալ: Հատերին յարտնի է որ փորլուծութիւն ամեն ժամանակ էլ կարող է պատահել: Մա-

նաւանդ ամառուայ շոգ ամիսներին այն է յուլիսին օգոստոսին և երեմն սեպտեմբերին, փորլուծութիւնը շատ է տարածված լինում. սակայն այդպիսի փորլուծութեան հիւանդութիւնները երկխզակ չեն և առաջանում են ամառուայ ամիսներին, երբ մարտական գործարաններն առելի են խանգարվում խալ մրգեղիններ կամ վատ յատիրութիւն ունեցող կերակուր գործածելուց, և կամ ամառուայ փոփոխական եղանակներից, երբ ցերեկը սաստիկ շոգ է լինում, խիլ գերերները ցուրտ: Այդ հիւանդութիւնը որ եթ նշաններով շատ է նմանում խօլերայի նշաններին, ինչպէս օրինակ՝ փորլուծութիւն, բերազի նշաններն, մկանութեամբ կծկումն, բայց և այնպէս աներփակումն, մկանութեամբ կծկումն է: Եւրոպացիք նւրուական կիւղալի հիւանդութիւն է: Նշանական կամ խօլեք անունն են տուել, Հնդկաստանի կամ անունը Ասիա կամ Խօլերայից զանազաններու անունով: Ասիական խօլերայով վարակված մարդու փրահամար: Ասիական խօլերայով վարակված մարդու փրահամարի և կղկղանքի մէջ, ինչպէս ասացինք, սուրակէսամձի և կղկղանքի մէջ այդ միջամբ կան, խիլ Եւրոպական խօլերայով հիւանդների արտավագութիւնները մէջ այդ միջամբ հիւանդները անուլում: Մի խօսքով Եւրոպական խօլերան եները մէջ գտնվում: Մի խօսքով Եւրոպական խօլերան աւելի թեթև հիւանդութիւն է, և համարեա բոլոր հիւանդներն էլ առողջանում են, եթէ ժամանակին բժշկական օգնութիւն հասցնվի:

ՀԱՅ

Հնդկաստանի խօլերան շատ ծանր տկարութիւն է, թէպէտեւ անբուժելի չէ, մանաւանդ հիւանդութեան սկզբում: Հիւանդների վրա անհրաժեշտ է կանոնաւոր ինամք ունենալ, թէ հիւանդութեան ընթացքը և թէ ինամք ունենալ դժուարատար պատահած է առողջանալը մեծ կախում ունի լաւ հիւանդականերից:

Առողջապահական պայմանների մէջ գտնված հիւանդն
աւելի քիչ է նեղութ, և բնդհանրապէս առողջութիւնը
շուտով է վերականգնում:

Հիւանդի համար պիտի ընտրել բնակարանի ամենամեծ սենեակը: Նթէ առողջ մարդու համար հարկաւոր է առողջապահական պայմաններին համաձայն բնակարան ունենալ, ուրեմն աւելի ևս հարկաւոր է հիւանդ մարդու համար, քանի որ հիւանդը կարողութիւն չունի վճասակար ազգեցութիւններին դժմանալ: Անմաքութիւնը, ծանրացած օդը, խոնաւութիւնը, սենեակի տաքութեան աստիճանի սաստիկ տատանումը, դժուարամարս կերակութը, հիւանդի վաս աւելի շուտ են ազդում քան թէ առողջի վրա. ուրեմն հակառաօղջական պայմանների մէջ գտնվող հիւանդի գրութիւնն աւելի երկիւղալի է, քան թէ առողջապահական պայմաններով շշապատված հիւանդի գրութիւնը:

Նթէ հնար է, չպէտք է ընտրել դէմի հիւսիս նայող սենեակն, որովհետև արեգակի ձառագայթներից գուրկ է: Սենեակը պէտք է լինի բարձր, օդանցք, վարարան և կամ բուխարի պէտք է ունենալ. ձմեռ ժամանակ վառարանը կամ բուխարին պէտք է միշտ վաս պահել օդամաքրութեան համար Ամառ ժամանակ լաւ եղանակն պատուհանները կարելի է ամբողջ օրը բաց թողել, և կամ եթէ այդ անյարմար է, կից սենեակի պատուհանները բաց պահել, իսկ ձմեռը սենեակի օրը պէտք է նորոգել օդանցքներով: Անկողնակալը պատուհանից պէտք է հեռու տեղաւորել և այնպէս, որ հիւանդին ամեն իրզից կարելի լինի մօտենալ: Հիւանդի երեսը դէմի պատը պիտի լինի դարձած, որպէսզի պատուհանի լուսը չնեղացնէ նրան: Աւելի նպատակայտարմար է անկողնը փալուտի խոտով լցնել, որ եթել էժանագին

ներթագի վերջը կարելի լինի այսուհետեւ հիւանդի լուսք է կլէ օնկա փառել մաքսութիւն պահպաններու համար: Հիւանդպահները պէտք է մեծ ուշագրութիւն գործնեն հիւանդի արտադրութիւնների վախածի և կրկանքի վրա, որոնք պիտի ուղղակի ընդունվեն առանձին ամպնեցին մէջ: Խիստ մաքրութիւն պահպաններու համար աւելի յարմար է ոս կեղսակալ ամանները ապակուց լվնին և ոչ թէ մետաղից:

Որովհետեւ խօթերացով հիւանդի վախածն ու կըդկանքը վաշակիչ միզբունքներ—միլիոններ են պարունակում, այդ պատճառով ամեն անգամ վախածի և կըդկանքի վրա պէտք է ածել այնպիսի դեղեր, որոնք ախտածին միլիոններին սպանում ոչնչացնում են: Այդ գործողութեանը մենք բժիշկներս գ է զ կ ն ֆ ե կ ց ի ա ենք ասում: Եսկ միզբունքներ ոչնչացնող դեղերին՝ դէզինֆեկցիսական միջոցներ ենք անուանում: (Դէզինֆեկցիա բառը լատինական բառ է և նշանակում է առաջիններին չվարակութիւն տալ):

Ուրեմն դէզինֆեկցիա անել ասելով մենք պէտք է հասկանանք՝ վարակիչ վախածի միզբանքի մէջ գտնված միլիոններին ոչնչացնելու: Եւ որովհետեւ խօթգտնված պարածառը վախածի ու կըդկանքի մէջ բայի տարածման պատճառը վախածի ու կըդկանքի մէջ գտնվող միլիոններն են և ոչ թէ ինքը հիւանդը, որին աներկեւդ կարելի է մօտենալ, այդ պատճառով հիւանդականների ամենագլխաւոր պարատականութիւնը պէտք է պահպանի և կեթ կեխտակալ ամանների մէջ ընդունված լինի լսկոյն և եթ կեխտակալ ամանների մէջ ընդունված վախածն ու կըդկանքը դէզինֆեկցիայի ենթարկել:

Այդ նպատակի համար պէտք է գործ դնել հետեւակ դէզինֆեկցիական խառնուրդները.

Ամենից առաջ կեղսակալ ամանները մինչ կէսը պէտք է սուլեմ մատի ջրախառնութեան լցնել: Առուել

մայի ջրախտանուրդը պէտք է պատրաստած լինի $\frac{-1}{10}$ օ⁰₀ սուլեմայից, այսինքն եթէ սուլեման վերցնենք մի մսխալ ջուրը պէտք է վերցնել 1000 մսխալ:

Այսուհետեւ կեղտակալ ամանները մէջ իւրաքանչիւր Յ գրվանքայ արտաթորութիւնները վրա պէտք է ածել սուլեմայի (սուլեմա), կաբըօլեան թթուատի (карболовая кислота) և խլօսացինկի (хлористый цинк) խառնուրդը՝ հետեւեալ չափով.

Սուլեմա 2 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս...

կէս մսխալ.

Կարբօլեան թթուատ 6 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս մէկ ու կէս մսխալ.

Չոր խլօսացինկ 20 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս չորս ու կէս մսխալ:

Այս խառնուրդի իրախարէն կարելի է գործ գնել նմանապէս, ամեն մի երեք գրվանքայ արտաթորութիւնները գէզինֆեկցիա անելու համար, և հետեւեալ խառնուրդը, որ առաջին խառնուրդի նման է, միայն խլօսացինկի տեղ ծծմբապղինձ (մեծին կյարօշտ—կապուտքար) պէտք է լինի.

Սուլեմա 2 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս կէս մսխալ.

Կարբօլեան թթուատ 6 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս մէկ ու կէս մսխալ.

Ճիճմբապղինձ (կապուտքար) 34 գրամի, կամ մեր կշռով մօտաւորապէս ութի մսխալ:

Հիւանդի արտաթորութիւնները—իրախածն ու կըդկանքն արելով նոյնակչ կարելի է գէզինֆեկցիա անել: Դրա համար կեղտակալ ամանները պէտք է լցնել իրատի թեփով կամ տաշեղով, վրան բաւականաչափ նաւթածել և հիւանդի արտաթորութիւնները ուղղակի ընդու-

նել այդ տեսակ արատրաստած ամանների մէջ և յետոց դուրսը բաց օդի մէջ այրել: Պէտք է լաւ ուշադրութիւնները չժամակվեն անկրողնի, դարձնել, որ արտաթորութիւնները չժամակվեն անկրողնի, որերի կամ կան կարսամիների վրա: Խօլերային արտաթորութիւններով ապականված էժանագին առարկաները կարելի է ուղղակի այրել: Ավլուտակեղինն ու վերմակը պէտք է ընկղզել մի միջ աման, որի մէջ պէտք է ածած լինի սուլեմայից, կարսութեան թթուատից ու խլօսացինկից պատրաստած խառնուրդը հետեւեալ չափով.—

Սուլեմայի ջրախառնուրդ 0,1⁰₀ այսինքն մէկ միլիալ

սուլեմա, 10¹₂ գրվանքայ չուր:

Խլօսացինկի չուր 2,0⁰₀ այսինքն 20 միլիալ խլօրացինկ եւ 10¹₂ գրվանքայ չուր:

Կարբօլեան թթուատի չուր 0,5⁰₀ այսինքն 5 միլիալ

կարբօլեան թթուատ եւ 10¹₂ գրվանքայ չուր:

Այս երեք տեսակ գէզինֆեկցիական ջրախառնուրդները խառնում են միասին հաւասարաչափ և ածում տաշատիր, որի մէջ ընկղզում են սպիտակեղինչը և այլ բուացիներու առարկաները: 4—5 ժամից յետոյ սպիտակեղինը կամ միւս առարկաները քամում են և ուղարկում լուացրին:

Պէտք է լաւ իմանալ որ այդ գէզինֆեկցիական նիւթերը սաստիկ թունաւոր յատկութիւն ունին, մանաւանդ սուլեման, ուստի գրանց գործածողները միծ գգուշուաւացիներ էնիս պէտք է բանեցնեն, եթէ ոչ կարող են թունաւորվել:

Այլ նոյն գէզինֆեկցիական ջրախառնուրդով կարելի է լուանալ յատկաները, կան կարսակի և ազդեցին կեղուսած առարկաները:

Հիւանդապահները ամեն անգամ հիւանդին մօտենալուց յետոյ պէտք է իրանց ձեռքերը լուսնան գէզինֆակտուրից պահպան առաջնական առարկաները:

Փեկցիական $0,1^{\circ}$ սուլեմայի ջրախառնությունը, այնուհետև սապանով և հասարակի ջրով լուսացվել։ Նմանաբէս ձաշելուց առաջ և ընդհանրապէս կերպարութ ընդունելուց առաջ պէտք է ձեռքբերը դէպինֆեկցիայի ենթարկել։ Հիւանդի բնակարգութ կերպարութ և մինչեւ օնդամ ջուր չպէտք է բնդունել։ Հիւանդապահները իր ժամանակին պէտք է ուտեն ու խմեն, քաղցած փորով հեւանդի բնակարգութ ապէտք է մանեն։

Հիւանդի առողջանալուց կամ՝ տարաբաղդաբար, մեռնելուց յետոյ բոլոր բնակարանը և նրա մէջ գտնված բոլոր առարկաները պէտք է գէզինֆեկցիայի ենթարկել։ Այդ նպատակի համար աւելի նպատակարգմար է գործ դնել՝ ծծրաթթուաս գաղը (շերտաւայ կալոտ) հետևեալ կերպով.—

քանչիւը խորանարդ սաժէնին¹² գրվանքայ ծծումբ), և ծծումբի վրա էլ սպիրտ են թափում։ Սպիրտը վառելուն պէս դուրս են գալիս սենեակից կիսաբաց գունվ։ այգ կիսաբաց դուռն էլ շուտով դրսեց թղթում են։ Ծծումբը սկսում է վառվել և ծծմբաթթուատի գազ լուսակացնում, որ և լցվելով սենեակի մէջ, եր գէ-է առաջանում, որ և լցվելով սենեակի մէջ, եր գէ-գինֆէկցիական յատկութեամբ ոչնչացնում է սենեակի մէջ գտնված բուրը վարակիչ նիսթեը—մկրօբները։ 24 ժամից յետոյ բաց են անում գուներն ու պատուհանները և լաւ հողմահարում են սենեակից։ Դրանից յետոյ միայն կարելի է մանել բնակաբանը։

Ծծբաթթուատի գազը անգոյն է և հեղառուցչ և
իծու հոս ունի, թոքերի վրա սասաթիլ է ազդում և
լինասում. այդ պատճառով հեւանդի բնակարանը ծծբա-
թթուատի գազով դէզինֆեկցիա անելու ժամանակ աէտք
է թէ բնակարանի կեց բնակիչներին և թէ վերին հարկի
բնակիչներին հեռացնել կրանց բնակարաններից, մինչև
դէզինֆեկցիայի գործողութեամ վերջանալը:

ԵՒՂԵԿԻ ԳԱԼՈՅ ՀԱԽԱՆԴԻՆ ՕԳՆԱԼԻԹԻՐ ՏԱՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Խօլերավի տարածված ժամանակ փողութութիւն
ունեցող ամեն մի հիւանդին անհստեղ է անկողնութ
պառկեցնել, թէսկտե, կրկնում ենք, ամեն մի փողու-
ծութիւն ապացոյց չէ, թէ հիւանդը խօլերայով է վա-
րակված, բայց և այնպէս զգուշութիւն բանացնել և խ-
լոյն և թէ միջոցներ դորձ դնել աւելի ճեռնառու է, քան-
թէ անուշադիր մնալը:

Առանց բժշկի լսողորդե դեբեքը գործածության
անօգուտ և մինչև անգամ վնասակար է, քանի որ հիւան-

դութեան նշանները այնքան սաստիկ և բարդ են լինում որ այս կամ այն գեղի նշանակութիւնը և չափը միայն բժիշկը կարող է որոշել: Հիւանդապահները և ընդհանրապէս հիւանդի ազգականների ամենագլխաւոր պարտքըն է հիւանդի արտաթօրութիւնների դէվինֆեկցիան հշտութեամբ կատարել և բնակարանի մէջ անապայման մաքրութիւն պահպանել, որով նրանք ազատված կը լինին խօլերայով հիւանդանարուց: Խոկ հիւանդի համար անշուշտ հարկաւոր է բժշկի ներկայութիւնը:

Մենչև բժշկի գալը հիւանդին հետեւեալ օգնութիւնը պէտք է տալ.

Փոք լուծութեան դէմ տալ Բօտ կին և կապէները (որ ամեն գեղատներում կարելի է գտնել), Յ կամ 4 ժամը մի շորոշամ 10-ից մինչև 20 կաթել:

Փոքի վրա գնել պարկի մէջ լցրած տաք աւազ, կամ թեփ, կամ աղ և կամ տաք աղիւններ:

Միենոյն նպաստակի համար կարելի է գործ դնել և տաք ացնող կօմպլիս (սօրցեալօպի կոմպրես), հետեւեալ կերպով.—Երկու կամ չորս անգամ ծաղած (փորի մեծութեամբ) երեսսրբիչը կամ մի ուրիշ կտաւ թշում են սառը ջրե մէջ, լաւ քամում և յետոյ վուում են փորի վրա. կտաւի կամ երեսսրբիչը վրա դնում են կլէօնի այն մեծութեամբ, որ երեսսրբիչը ծածկվի, խոկ կլէօնկամի վրա գնում են ֆլանչ, կամ մակուդի կտոր և փորը լաւ կապում են, այնպէս որ ֆլանչի կամ մակուդի տակով օդ չբանէ: Կօմպլիսը փոխում են երեք կամ չորս ժամը մի անգամ:

Փսխողութեան դէմ հիւանդին պէտք է տալ մաքուը սառուցի փոքրիկ կտորներ կուլ տալու:

Եթե միանունքների կծկումն է սկսվում, հարկաւոր է բոլոր մարմինը շինել բռու շուրջ կամ բրդէ գուլ-

պայով. առաջ պէտք է կամաց շինել մէկ ձեռքը, յետոյ միւսը, յետոյ ոտները և ալճ. շինելու համար կարելի է գործածել արագ, սպիրտ և կամ քեաֆորի սպիրտ (կամփօրին սպիրտ):

Հիւանդի ոչժը պահպանելու համար խմացնում են արագ, լաւ գինի, կօնեակ, շամպանիա գինի, կարմիր գինուց պատրաստած գլնոմիչն և ալճ:

Լուծողութեան ժամանակ հիւանդին կարելի է տալ կաթ, ոչխարի մսից պատրաստած սուպ: Կաթը պէտք է քեչ-քիչ տալ, մի-մի քառորդ բաժակ կւրաքանչիւր մի ժամում, մի թէյլ գդալ կօնեակի հետ խառն: Նմանապէս սուպը պէտք է քեչ-քիչ տալ, առաջուց երեսի կւրզ քաշելով:

Փսխողութեան ժամանակ անկարելի է լինում կերակրել հիւանդին, ուստի պէտք է բաւականանալ միմիայն ոչժ առողջ ըմպելիքներով:

Հիւանդի մարմինը սաւչելու ժամանակ պէտք է գինու շիշերը լցնել տաք ջրով, շիշերի բերանը լցանով լաւ ամրացնել և դնել հիւանդի ոտների մօտ, կողքեւքին:

Հիւանդի առողջանալու ժամանակ, օգտակար կը մի Բէօմիւրի 28° աստիճանի տաքութեան վաննա ընդունել, օրը երեք-չորս անգամ, 20 կամ 30 բուէ տևողութեամբ, կամ որքան հիւանդը կը կամ ենալ:

Մենչև բոլորովին առողջանալը, հիւանդը պէտք է ալ ա հ ե ց ո ւ թէ լ ւ ն (ղիետա) անի, գժուարամարս կերակուրներից զգոյշ լինի և միշտ գործ դնէ դիւրամարս ու մննդարար նիւթե՞ր կաթ, ձու, թէթեւ սուպ, խմելու համար՝ ջրախառն գինի. հում ջուր խմելուց պէտք է զգուշանալ և միշտ պէտք է գործածել եթի տուած բայց սաւցրած ջուր:

Եթէ հիւանդը, տարաբաղդաբար, մեռնում է, պէտք է դիւակը փաթաթել 0,1% սուլեմափի ջրախառնուրդի մէջ

Թաթախված չարսաւներով և դնել կ պը ա ծ անթափանցիկ գագաղում: Թաղումը պէտք է կատարել առանց հանդէսի, գերեզմանները պէտք է, որքան կարելի է, խորը փորել, եթէ գեւզը կամ քաղաքը յարմարութիւններ ունի, պէտք է առանձին գերեզմանատուն ընտրել, և որքան կարելի է քաղաքից կամ գեւզից հեռու:

ՆԱԽԱՌԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԶՍՅՆԵՐ

Խօլերայով չիւանդանալու և անգգուշութեամբ հեւանդութիւնը չտարածելու համար պէտք է կանոնաւոր կեանք վարել:

Կանոնաւոր կեանք վարելու համար հարիսաւոր է մաքրութիւն պահպանել, չափաւոր գործ դնել թէ ուտելեցներ և թէ լսմէցքեղէնները, կանոնաւոր կարգադրել թէ աշխատութեան և թէ հանգստութեան ժամանակը: Այդ նպատակի համար պիտի հետեւեալ լսորհուդները կատարել.

1) Պէտք է մաքրութան պահել բնակարանը և ընդհանրապէս բոլոր անդերը—տները, սենեակները, բագերը, ախոռները, մառանները, արտաքնոցները, կեղտակալ հորերը, աղբանոցները, պարզ և տաք եղանակներն լուսամուտներն ու դռները բաց պահել օդամաքրութեան համար. խել ցուրտ և վատ եղանակներին վառարանները և կամ բուխարենները վառ պահել:

Շատերը օդամաքրութեան համար գանազան տեսակ հոսաւէտ թղթեր կամ փոշի (porosioక) են վառում: Այդ բոլորը անօգուտ և մինչեւ անգամ վնասակար է: Հոտաւէտ նիւթեր վառելով սենեակի օդը ոչ մի կերպ չի մաքրվի: Սենեակների մէջ չակտու է պահել կեղտակալ ամաններ, անմաքրութիւններ, կեղտուուած սպիտակեղէններ:

Ներ, ևայն: Նմանապէս մէծ ուշադրութիւն պէտք է դարձնել խանութների մաքրութեան վրա, մանաւանդ ուտելեցն վաճառող խանութների վրա, որոնք վաճառում են միս, ձուկ, բանջարեղին, կոլբաս, հաց և այլն: Պէտք է ուշադրութիւն դարձնել տրակտիրների, հասարակական հարաբենների վրա:

Ամեն անգամ հասարակութիւնը ինքը պէտք է ուշադրութիւն դարձնէ համբառողջական պայմանների մէջ գրանվող խանութների վրա և խկոյն իմաց տայ բժշկներին կամ քաղաքային և գիւղական վարչութիւններին, ապա թէ ոչ ինչքան էլ շատ լինին նշանակված վերահսկողներն ու բժիշներ, դժուար և մինչև անգամ անհնարին է ամեն բանին բարեխղճութեամբ վերահսկողութիւն անել:

2) Պէտք է թէ հագուստը և թէ սպիտակեղէնները մաքրութան պահել և սպիտակեղէնը շուտ-շուտ փոխել:

3) Մարմինը պէտք է մաքրութան պահել, բաղմիս գնալը շարունակել, միայն պէտք է ուշադրութիւն դարձնել և բաղնիսների մաքրութեան վրա, մրսելուց զգուշանալ: Ով սովորութիւն ունի տնակ սառը ջրի մէջ լողանալու, կարող է իր սովորութիւնը շարունակել, միայն զգուշութիւններ բանեցնելով: Ցուրտ ժամանակ չուղանալ, նոյնական մողանալ առաւտօնեան շատ վաղ կամ երեկոյեան շատ ուշ: Պէտք է ձաշ անելուց յետոյ խկոյն չողանակալ, նմանապէս չողանակ ոչինչ չկերած:

4) Մէծ ուշադրութիւն պէտք է դարձնել խմելու ջրի վրա: Թէ գետերը, թէ ջրհորները, ուստեղից խմելու համար ջուր են բանեցնում, պէտք է մաքրութան պահել. դրանց մէջ թթափել այլեւալ կեղտուութիւններ, մանաւանդ խօլերայով հիւանդի փսխածն ու կրիզանքը: Վաս յատկութիւն ունեցող ջուր չլուսական պահել, միշտ գործ գնել են

տուած և յետոյ սառցրած ջուր. շատ էլ հաւատ չընծայել այլքայլ խմբչքներին, ինչպէս օրինակ կվաս, լմօնադ եայն. Մի անգամից շատ ջուր չիմել, մանաւանդ գաղրած կամ քրտնած ժամանակ, աւելի լաւ է ծարաւը զովացնել տաք թէյով: Արազի, լաւ գիմու և լաւ գարեջրի չափաւոր գործածութիւնը կարելի է մանաւանդ նրանց համար, որնք սովորութիւն ուշին գործածելու:

5) Մեծ ուշադրութիւն աչտք է դարձնել ուտելեղէնների մաքրութեան և թարմութեան վրա, նմանապէս նրանց քանակութեան և դիւրամաբութեան վաս: Ամեն մէկը մօտաւորապէս վորձով էլ գիտէ, թէ որ կերակուրը իր համար մննդարար և դիւրամաբար է, ուստի կերակուրը ընտրելիս խրաքանչիւր մարդ կարող է առաջնորդվել իր սեփական փորձով: Կանաչեղէնների և մըգեղէնների չափաւոր գործածութիւնը առողջ ստամքս ունեցող մարդու համար կարելի է. մէրգը ճաշից յետոյ ուտել, խալի կամ շատ հասած՝ մանաւանդ փառած պատուհներ չպէտք է գործածել: Ոչինչ միերած չգուրս գալ տանից: Երկար ժամանակ առանց ուտելու չմնալ: Զադ, հում կամ սառը կերակուր չուտել, գգոյշ մինել սունկ, սալատ, խիար, բոլիլ, բանջարեղէններ և պատու գործածելուց, մանաւանդ ջուր խմեցնող ուտելեղէններից, ինչպէս օրինակ կորաս, խոզի միս, աղի ձուկ, պանիր, սոխ, սխառոր և այլն: Աներկեւղ կարելի է գործածել եփած խտակ կամ: Կաթը բանջարեղէնների և մըգեղէնների հետ չպէտք է գործածել: Շատերը երկիւղից դիմում են աւելորդ զգուշութիւնների թէ ուտելու և թէ խմելու մէջ, այդպէս անելն էլ մնաս է, քանի որ կեանքի մէջ յանկարծակի փոփոխութիւն մատցնելը օգուտի փոխարին մնաս կարող է տաք: Թոյլ կազմված, մանաւանդ թոյլ մարտողութիւն ունեցողները պէտք է շատ գգոյշ մինին ուտելու և խմելու մէջ:

6) Մրմելուց ոչտք է զգուշանալ, չպառկել և չքնծել խոնաւ գետնի վրա, խոնաւ տեղերում չզբօսնել, և ընդհանրապէս ուշ երեկոները չմանգալ, եղանակի համեմատ հագնուել, մանաւանդ ոտներն ու փորը տաք պահել: Փորձը ցոյց է տալիս, որ Փլամէլով կամ մահագոլ փորը կապած պահելը շատ օգուտ է:

7) Հետու մնալ գելեսակին քէֆերից, — հարբեցողութիւնից, խնջուքներից, Փիզիքական և մասարո աւելորդ աշխատութիւնից, որովհետեւ կազմվածքը թուլանալով, աւելի է տրամադրվում հիւանդանալու:

8) Չպէտք է գործածել զանազան կասկածելի, պատենտաւ գեղեց լուսակին կապիներ և այլ սաստիկ ներգործութիւն ունեցող դեղեր: Մանաւանդ պառանց բժշկի խորհութիւնը չպէտք է գործածել զանազան լուծողական կամ կանոնական դեղեր:

9) Տանտէրերը, արհեստանոց պահողները, խանութպահները և առհասարակ ամենքն էլ պէտք է ուշադրութիւն դարձնեն իրանց վերահսկողութեան ասակ գտնված անձանց առողջութեան վրա և իրաքանչիւր դէպրում, մանաւանդ երբ լուծողութեամբ հիւանդացողներ է մինում, խայոյն պէտք է բժշկին գիմեն: Չպէտք է գործ դնել զանազան գաղանի դեղեր:

10) Խոլերա երեւալու ժամանակ ոչ ոք չպէտք է երբնակած քաղաքը կամ գիւղը թողնի և այլ ուղեւորվի, որովհետեւ թէ երկիւղը, թէ ձանակարգորդութեան նեղութիւնը, ինչպէս օրինակ լաւ կերակրից, բնակարանից, հանգատութիւնից և բժշկական օգնութիւնց զուրիկ մինելը աւելի սաստկացնում է խոլերալով հիւանդանալու տրամադրութիւնը: Բայց զբանից այդպէս վարփողները նպաստում նն խոլերակի տարածմանը մի քաղաքից միւս քաղաք, մի գիւղից միւս գիւղ:

11) Որովհետեւ չքաւոր և աղքատ դասակարգը զուրկ
է լինում լաւ բնակարանից, կերպից, հագուստից և ընդ-
հարապիս հակառողջասահական պարմաների մէջ է լինում,
աւելի է տրամադրված խօսքայով հետանդանալու, հարկա-
ւոր է որ ունեող և հարուստ դասակարգը թէ ինքնասաշտ-
պանութեան համար և թէ նոյն խոր մասդասիրութեան
տեսակիցից ամեն կերպ օգնութիւն տայ աղքատներին ու
չքաւորներին: Այս նաևատակի համար շատ լաւ կը լինի, եթէ
խօլերայի ժամանակ հասարակական ճաշարան-
ներ հաստատվին, որպէսզի չքաւոր ու աղքատ դասա-
կարգը կարողանայ ձբիաբար մաքուր և սննդարար կե-
րսակուր ստանալ: Նմանապիս չքաւորներին և աղքատնե-
րին պէտք է սավատակեղէն, հագուստ ու վառելիք բա-
ժանել և բժշկական ձրի օգնութիւն տալ:

12) Հետանդի հագուստը, սավատակեղէնները, կոհ կա-
րսակը, անկողնակալը, տեղաշրջը, և այլ առարկաները
պէտք է շատ խիստ գէզլնֆեկցիայի ենթարկվեն և ապա
գործ դնվեն: Պէզլնֆեկցիայի համար պէտք է վաղոզոք
գէզլնֆեկցիական նիւթերի պաշար ունենալ:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Խօլերա հետանդութիւնը՝ ամբողջ հասարակութեան
թշուառութիւնն է, և խօլերայի համաձարամիւմները սահ-
մանափակիւ և մինչև անգամ բոլորովին արմատափել
անել կարող է ոչ թէ մէկը, երկուսը, այլ ամբողջ հասա-
րակութիւնը: Միայն հասարակական ինքնագործունէու-
թիւնը կարող է մեզ ազատել վարակիչ հետանդութիւնների
դառն հետեւանքներից, լիչպէս էլ որ ազատել է և
ազատում է քաղաքակերթ ազգերին:

Դեռ հին ժամանակներում խօլերայից ազատվելու
համար կ ա ը ա ն տ ի ն ն ե ր է ի ն կ ս պ մ ա կ ե ր պ ո ւ մ ս ա հ-
մանների վրա, աշխատելով խօլերայով վարակված երկիր-
ներից մարդկանց երթեւեկութիւնը գաղաքական միան-
չուայ ժամանակները ճանապարհների հաղորդակիցութիւնը
և մարդկանց յարաբերութիւնը շատ գարգացած չլինելով,
յերակի, երբեմն յաջողվում է և այս և այն տեղերը միան-
գամայն առանձնացնելով խօլերային համաձարակութիւնը
ազատել: Բայց այժմ, երբ միշազգային յարաբերութիւնները
երկաթուղիների, խճովլների, շոգենամեւսի միջոցով
վերին աստիճանի զարգացած են, կազմակերպութիւնները կորցրել
են իրանց նշանակութիւնը, իրուկ նախապատշաճանողա-
կան միջոց: Կարանափնը միայն այն ժամանակ կարող է
օգնու տալ, երբ սահմանագլուխում կարելի լինի մարդ-
կանց և ամեն մի առարկայ գէզինֆեկցիայի ենթարկել,
խոր հետանդներին կանոնաւոր բժշկութեան: Բայց արդեօք
կարելի՞ է մի այդպիսի գործողութիւն հշտիւ իրագործել:
Վերցնենք նոյն խոր օրինակ Պարսկաստանի մեր
սահմանները: Հնամը է արդեօք այդ ահազին տարածու-
թեան վրա մի որեկցէ բաւարար բժշկական տեսչութիւն
ունենալ: Ամենալաւ կարանափնում անգամ անկարելի է
իրաքանչյուր խօլերային միկրօբին պասպարտ ու ի ն
վ ե ր ա հ ս կ ո ղ ու թ է ա ն տ ա լ ի դ ն ե լ, քանի որ, ինչպէս
յատանի է, եթէ մի որեկցէ կերպ խօլերային միկրօբը
անցնէ սահմանը, յաջող հանգամանքներին նայելով՝ 24
ժամում կարող է միմիօնաւոր սեցունդներ տալ: Ուստի
պարզ է որ խօլերայից մեր երկիրը ազատելու համար,
աւելի նպատակարմար է յոյն դնել ոչ թէ կարանափն-
ների վրա, այլ նոյն խոր մեր քաղաքների ու գլուղերի ա-
ռողջապահական գրութեան բարուքման վրա:

Իւրաքանչիւր քաղաք և իւրաքանչիւր գիւղ պէտք

է մեծ ուշադրութիւն դարձնէ իրանց բնակութեան տեղերի
վրա և անընդունակ դարձնէ խօլերայով հիւանդանալու, այդ
բանը կարելի է անել գլաւուսակէս անպայման մաքրու-
թեամբ, Մաքրութիւն վոզոցների, մաքրութիւն հասպա-
րակների, մաքրութիւն բագերի, բնակաբանների, սենեակ-
ների, մաքրութիւն Փարբիկանների, մի խօսքով, ամ են
բան ի մաքրութիւն, Մաքրութիւնը խօլերայի թշնա-
մին է: Խօլերայի միջրօբը մաքուր տեղեր ընկնելով, սովոր-
ածութիւններ ոչնչանում է, որովհետեւ նը ա
կերակութը կեղանէ:

Այդ բանը վաղուց են համացել քանդաքակիլովթ աղ-
գերը, որոնք խօլերայի դէմ մաքրութեամբ են կովում:
Եօթանասուն և ութսուն թուականների խօլերային հա-
մաձարակութների ժամանակ Անգլիան ազատ մնաց
խօլերայից, իր առողջապահական օրէնքները ճիշտ կատա-
րելով: Այդ առողջապահական օրէնքները համաձայն՝
Անգլիան ժամանակին մաքրեց իր բոլոր քաղաքները
և բնակած տեղերը, զբանցքներ շնեց բնակիչներին մա-
քուր և առողջաբար զուր մատակարարելու համար, ա-
պականութիւնները քաղաքից զուրս հանելու համար կա-
նունաւոր կեղատատար խոզով ակներ շնեց (կահ-
անալիքայի), ուշադրութիւն դարձրեց, որ բնակիչները առող-
ջաբար կերակրեղէններով մատակարարվին, —և ահա
յս բոլորը անելով ազատ մնաց խօլերայից, և ապագա-
յում ևս ազատ կըմնայ:

Ուրեմն խօլերայից ազատվելու համար՝ մասնաւոր և
ընդհանուր նախապաշտամուղական միջոցները մենք պիտի
որոնենք առողջապահութեան սկզբունքների մէջ, և այդ
գործադրելով միայն՝ մենք կարող ենք յու-
րաքանչափ պահպան կազմութիւն կազմութիւն կազմութիւն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՅԱ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ.

„ԼԱԼՈ“, վէսիկ ԹԵՄՐՔԱՀԱՅԵՐԵ ԿԵՄՆՔԵց . . . գԵՆԸ 5 Կ.

„ԽՈՂԵՐԱ Եւ ՆՐԱ առաջն առնելու ՄԻՀՈԳՆԵՐ“.

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

Դիմել այս հասցեով.

Տիբլիս, X. Մալումյան

24012
24013
24014

2013

